

ان يقعون بالسيف ايمناً زق سهمها فاصاد للعنطلن
 غالكون وابيبي مخلين واخوه حما خارج دار الولي
 وضيع اعناقها في الفنار من نشرن الثاني في الماء
 او طلبيون الدليل عيدها وملائكة حسناً لهم القدر
 بوطون عه لغيرها ازا وبيكت عليهما كلن وفننتها
 في هذه احسان موكلا على الالذين وسي ابستبي وعده وصف
 مبتليهمها وجها اقفا وادار سعادتهم الذي
 شاهدته اذا الدليل لاتني كت لهم همها



بَشْرٌ

بَشْرٌ

ԱՐԱՋՈՒԹԻՒՆ ԱՇՎԱՆ ՄԱՏԵՎԱԴՐԱՆԻ
 ԱՐԱԲԵՐԵՆ ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ
 ԶԵՂԱԳՐԵՐԻ

Մատենադարան

Մեսրոպ Մաշտոցի անվան հիմն ձեռագրերի խմբակությունը և
«Մատենադարանի բարեկամներ» բարեգործական հիմնադրամը
Երախտագիտություն են հայտնում «ԶԵՅ ԹԻ ԱՅ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ-ին
սույն գրքի հրատարակությանն աջակցելու համար

Matenadaran

Mesrop Mashtots Institute of Ancient Manuscripts and
“Friends of the Matenadaran” Benevolent Fund
express their gratitude to “JTI ARMENIA” CJSC
for sponsoring the publication of this book



MATENADARAN
MESROP MASHTOTS INSTITUTE OF ANCIENT MANUSCRIPTS

CATALOGUE
OF THE CHRISTIAN ARABIC
MANUSCRIPTS OF THE MATENADARAN

By
Moses Khecho and Ester Petrosyan

YEREVAN 2021

01
y-99
h2.
ՄԱՏԵՆԱԴԱՐԻ
ՄԵՍՐՈՊ ՄԱՍԻՏՈՅԻ ԱՆՎԱՆ ՀԻՆ ԶԵՐԱԳՐԵՐԻ
ԲԱՆՏԵՏՈՒՏ

ՑՈՒՑԱԿ
ՄԱՇՏՈՅԻ ԱՆՎԱՆ ՄԱՏԵՆԱԴԱՐԻ
ԱՐԱԲԵՐԵՆ ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԶԵՐԱԳՐԵՐԻ

Կազմեցին՝
Մովսէս Խեչօն և Էստեր Պետրոսյան

ԵՐԵՎԱՆ 2021

ՀՏԳ 091

ԳՄԴ 63.2

8 991

Տպագրվումէ Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի
գիտական խորհրդի որոշմամբ

Խմբագիրներ՝ Անի Ժ. Ավետիսյան. Միհրան Մինասեան

Յուղակ Մաշտոցի անվան Մատենադարանի արտքերևն քրիստոնեա-
8 991 կան ձեռագրերի / Կազմեցին՝ Մովսես Խեչը և Էսթեր Պետրոսյան. - Եր.:
Մատենադարան, 2021.- 184 էջ և զունավոր ներդիր՝ 8 էջ:

Հաստորիք բովանդակում է Երևանի Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադա-
րանի Արաբատառ ձեռագրերի հավաքածուի քրիստոնեական բովանդակու-
թյամբ 58 ձեռագրերի գիտական բնդարձակ նկարագրությունը: Նախատես-
ված է միջնադարագիտների, արաբագետների, աստվածաբանների և կրոնի
պատմության մասնագետների համար:

ՀՏԳ 091

ԳՄԴ 63.2

©ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ, 2021

ԱՌԱՋԱԲԱՆ

Արաբական արշավանքներով պայմանագրոված նոր իրավությունում,
երբ քրիստոնյաներն աստիճանաբար դառնում են փոքրամասնություն Միջին
Արևելքում, աւարածաշրջանի բազմազգ, բազմալեզու և բազմամշակութային
միջավայրում արաբերենով ստեղծվում է մատենագրական հարուստ ժա-
ռանգություն, որն ուղղված էր ժամանակի պահանջների և մարտահրավեր-
ների բավարարմանը: Արդեն Ը-Ժ դարերում գրի են առնվում քրիստոնեա-
կան բովանդակությամբ մեծարանակ ձեռագրեր արաբերենով:

Արաբական աշխարհում քրիստոնյաների պատմությունը կարելի է
բաժանել ծագումնաբանական երկու ճյուղի՝ արաբներ (թեև փոքրաթիվ),
որոնք քրիստոնեություն էին ընդունել դեռևս մինչև իսլամի ծագումը, և
Միջին Արևելքի քրիստոնյա բնիկներ՝ ասորիներ, հունակոսներ, պատիներ և
այլք, որոնք իսլամի տարածումից հետո մեծամասամբ հնիքարկվում էին
գերիշխող ուժի՝ արաբների ազդեցությանը և արաբացգում: Վերջիններս
կենտրոնացած էին հինգ հիմնական քրիստոնեական համայնքներում՝ մել-
քրիտ (հունադարձան), հակոբիկ (միաբնակ), նեստորական, զպոտ և մարոնի¹:

Վերադառնալով նախախւամական շրջանի արաբ քրիստոնյաների գո-
յության հարցին՝ պետք է նշել, որ հարավից գաղթած արաբական զասսանի
(الغساسنة) ցեղի ներկայացուցիչներն Արաբիայի հյուսիսում միութենաբակ
(piaphysite) քրիստոնյաներ էին, իսկ հյուսիս-արևելյան լախմիների (اللخميون)
ցեղն կը՝ նեստորական կենտրոն դարձած Հիրա (الحيرة) մայրաքաղաքով:
Մինչիւսամական ժամանակաշրջանում նեստորականությունը տարածված
էր Պարսից ծոցի երկայնքով, որանդից էլ սերում է է դարի հայտնի ասկե-
տիկ գրող Իսահակ Նինվեցին: Միութենաբակ քրիստոնեական համայնք

¹ Ա. Տեր-Ղևոնյան, «Հայ և Քրիստոնյա արաբական մատենագրական առնչությունների պատմությունից», Պաշտօնական ամսագիր Հայրապետական Աթոռոյ Ս. էջմիածնի, 1/1 (ԺՈ), էջմիածնի, 1977, էջ 57:

ՀՏԳ 091

ԳՄԴ 63.2

8 991

Տպագրվումէ Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի
գիտական խորհրդի որոշմամբ

Խմբագիրներ՝ Անի Ժ. Ավետիսյան. Միհրան Միհնասեան

Ցուցակ Մաշտոցի անվան Մատենադարանի արարերեն քրիստոնեա-
8 991 կան ձեռագրերի /Կազմեցին՝ Մովսես Խեչու և Էսթեր Պետրոսյան.- Եր.:
Մատենադարան, 2021.- 184 էջ և գունագոր ներդիր՝ 8 էջ:

Հատորը բովանդակում է Երևանի Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադա-
րանի Արաբատառ ձեռագրերի հավաքածուի քրիստոնեական բովանդակու-
թյամբ 58 ձեռագրերի գիտական բնդարձակ նկարագրությունը: Նախատես-
ված է միջնադարագետների, արաբագետների, աստվածաբանների և կրոնի
պատմության մասնագետների համար:

ՀՏԳ 091

ԳՄԴ 63.2

ISBN 978-9939-9257-7-6

©ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ, 2021

ԱՌԱՋԱԲԱՆ

Արաբական արշավանքներով պայմանավորված նոր իրադրությունում,
երր քրիստոնյաներին աստիճանաբար դասուում են փոքրամասնություն Միջին
Արևելյում, տարածաշրջանի բազմազգ, բազմալեզու և բազմաժակութային
միջավայրում արաբերենով սահեղձվում է մատենագրական հարուստ ժա-
ռանկություն, որն ուղղված է ժամանակի պահանջների և մարտահրավեր-
ների բավարարմանը: Արգեն Ը.Ժ դարերում գրի են առնվում քրիստոնեա-
կան բովանդակությամբ մեծաքանակ ձեռագրեր արարերենով:

Արաբական աշխարհում քրիստոնյաների պատմությունը կարելի է
բաժանել ծագումնաբանական երկու ճյուղի՝ արաբներ (թեև փոքրաթիվ),
որոնք քրիստոնեություն էին բնդունել զեռևս մինչև իսլամի ծագումը, և
Միջին Արևելքի քրիստոնյա բնիկներ՝ ասորիներ, հունախոսներ, զպտիներ և
այլք, որոնք իսլամի տարածումից հետո մեծամասամբ ենթարկվում էին
զերիշխող ուժի՝ արաբների ազգեցությանը և արաբացվում: Վերջիններս
կենտրոնացած էին հինգ հիմնական քրիստոնեական համայնքներում՝ մել-
քիտ (հունագավան), հակորիկ (միաբնակ), նեստորական, զպտի և մարոնի:

Վերադառնալով նախախուլամական շրջանի արար քրիստոնյաների գո-
յության հարցին՝ պետք է նշել, որ հարավից գաղթած արաբական զասսանի
(الغساسنة) ցեղի ներկայացուցիչներն Արաբիայի հյուսիսում միութենաբնակ
(macophysite) քրիստոնյաներ էին, իսկ հյուսիս-արևելքում լախմիների (اللخميون)
ցեղն էր՝ նեստորական կենտրոն գարձած Հիրա (الحيراء) մայրաքաղաքուի:
Մինչիսլամական ժամանակաշրջանում նեստորականությունը տարածված
էր Պարսից ծոցի երկայնքով, որտեղից էլ սերում է է դարի հայտնի ասկե-
տիկ գրող Իսահակ Նինվեցին: Միութենարնակ քրիստոնեական համայնք

¹ Ա. Տեր-Ղևոնյան, «Հայ և Իսիտունյա արաբական մատենագրական առնցությունների
պատմությունից», Պաշտօնական ամսագիր Հայրապետական Աթոռոյ Ս. Էջմիածնի, ԼՇ (ԺԱ),
Եջմիածնի, 1977, էջ 57:

գոյություն է ունեցել նաև հարավ-արևմտյան Արաբիայում նաշրանի օազիսում, որ կապված էր Եթովպական Աքսումի թագավորության հետ: Հիշատակություններ կան նաև Հիջազում Մեքքայում և շրջակայքում բնակվող արաբ քրիստոնյաների մասին, որոնք՝ փոքրաթիվ են եղել և, ամենայն հավանականությամբ, չեն կազմել առանձին քրիստոնեական համայնք²:

Արշավանքների արդյունքում արարները գրավեցին վիթխարի տարածքներ: Կայսրության սահմանները ձգվում էին Զինաստանի արևմուտքից և Հնդկական թերակղզուց մինչև Պիրենեյներ: Աշխարհաբարձրական այս նոր տժին բնորոշ էր էթնիկ և կրոնական համայնքների բազմազանությունը:

Իսլամական տիրապետության տակ հայտնված այս բազմատարր աշխարհում, անշուշտ, խրախուսվում էր դավանափոխությունը և խլամացումը: Հակառակ երևույթը՝ մուսուլմանների քրիստոնեության ընդունումը, հագվադեպ երևույթ էր, և դրա վկայություններ պահպանվել են սրբախոսությունների տեսքով բացառապես քրիստոնեական աղբյուրներում: Դրանց թվում հատկապես հայտնի են սր. Անտոնիոսի նահատակության պատմությունը (القديس أنطونيوس الذي استشهد بمدينة الرقة على أيام هارون الرشيد)՝ պահպանված արաբերեն, ասորերեն, վրացերեն, լատիներեն և եթովպական աղբյուրներում, Դավիթ Դիլնեցու (Սուրբան) հայերեն երկու ձեռագրերում պահպանված ավանդությունը և այլն: Այս աղբյուրների պատմական ճշմարտացիությանը պետք է զգուշավոր մոտենալ³:

Հևանտում և Միջագետքում աստիճանաբար առօրյա խոսակցական լեզու էր դառնում արաբերենը, իսկ ասորերենը, հունարենը, դպտերենը պահպանվում էին որպես զուտ կրոնական ծիսակատարությունների լեզուներ համայնքների ներսում: Արաբերենը, բացի ժամանակի առօրյա խոսակցական և իսլամի լեզուն լինելուց, նաև վերածվել էր տարածաշրջանի բազմաժակության միջավայրի մտավորականության լեզվի՝ ձևոք բերելով առավելություն մյուս լեզուների նկատմամբ: Արդեն խալիֆա՝ ‘Աբդ ալ Մալիքի օրոք (685-705 թթ.) պաշտոնական գրադրության լեզուն հունարենից և

² Նախախամական շրջանի երիտարար արաբների մասին տե՛ս՝ J. S. Trimingham, *Christianity Among the Arabs in Pre-Islamic times*, London: Longman, 1979.

³ Christian C. Sahner, “Swimming Against the Current: Muslim Conversion to Christianity in the Early Islamic Period,” *Journal of the American Oriental Society*, vol. 136, no. 2, April-June, 2016, pp. 265-284.

պարսկերենից փոխվում է արաբերենի: Այս փոփոխությունը թեև տեղի չի ունենում մի դիշերվա լնթացքում, սակայն խալիֆայության բոլոր հպատակները, այդ թվում քրիստոնյաները, պարտավորվում են հաշվի նստել արաբերենի ձեռք բերած նոր դերի հետ:

Նման պայմաններում, երբ դավանափոխ լինելը և իսլամ ընդունելը ոչ միայն քաջակերպում էր, այլև տալիս էր բազմաթիվ առավելություններ այլակրոնների նկատմամբ, իսկ արաբերենն էլ գարձել էր ժամանակի լինգվա ֆրանկան, հետզհետե առաջ է դալիս քրիստոնեական տեքստերը և առաջին հերթին Աստվածաշունչը հասարակ ժողովրդին հասկանալի լեզվով արաբերենով թարգմանելու անհրաժեշտություն: Այս գործընթացը կարենոր քայլ էր քրիստոնեությունը պահպանելու, հասկանալի դարձնելու և տարածելու գործում, թեև արաբերենը երբեք էլ որպես քրիստոնեության աստվածաբանական լեզու շատացավ այն հեղինակությունը, ինչ երրայերենը, հունարենը, արամերենը, զպտերենը և նաև հայերենը:

Է դարից սկսած մինչև մեր օրերը՝ ամբողջ 14 դար, գոյատելով իսլամական գերակայության պայմաններում արաբ քրիստոնյաները միջնորդի դեր են խաղացել արեելքի և արևմուտքի, իսլամի և քրիստոնեության միջև: Այս ամենի արդյունքում առաջացած արաբերեն քրիստոնեական մատենադրությունն իր զարգացման առանձնահատկություններն ունիր տարածաշրջանի քրիստոնեական համայնքներից յուրաքանչյուրում: Դրեթե մինչև ուշ միջնադար այդ համայնքներում ձևավորվում են երկլեզու՝ ասորերեն-արաբերեն, հունարեն-արաբերեն և զպտերեն-արաբերեն մատենագրություններ:

Քրիստոնեական աշխատությունները, անշուշտ, հաճախ արաբերենի էին թարգմանվում ասորերենից: Ասորերենը կատարել է միջնորդ լեզվի գեր հունարենից արաբերեն թարգմանությունների համար: Քրիստոնյա արաբ հեղինակներից շատերը թարգմանությանը զուգահեռ բնագրերը հարմարեցրել են ժամանակի պահանջներին՝ մտքում հստակ պահելով լսարանը, որին ուղղում էին հասցնել խոսքը: Այս առանձնահատկությունը բնորոշ է հատկապես արաբերենով շարադրված քրիստոնեական ստեղծագործություններին:

Հարկ է ընդգծել, որ արաբերեն քրիստոնեական և իսլամական աստվածաբանությունները զարգացել են զուգահեռաբար՝ փոխազդելով միմյանց, որով պայմանավորված ձևավորվել է ընդհանուր բառապաշտը, ինչ-

պես, օրինակ, դին (‘دین’) = կրոն բառը⁴: Բացի այդ, ի սկզբանե քրիստոնյաները, պատասխանելով մուսուլմանների գալանաբանական հարցերին և իրենց վարդապետությունը բացարելու համար, օգտվել են ժամանակի մուսուլման աստվածաբանների՝ մութաբալլիմների տերմինաբանությունից և արտահայտություններից:

Սակավաթիվ են պահպանված տեղեկությունները միջնադարյան իսլամական գրչության կենտրոնների մասին: Արոշ տվյալներ հնարավոր է դուրս բերել հիշատակարաններից:

Հպատինի է բարձր էլիտարի ներկայացուցիչ հարուստ հովանավորների մասին, որոնց պատվերով և օժանդակությամբ ստեղծվում և ընդօրինակվում էին ձեռագրերը: Ժամանակի ամենահայտնի մտավորական կենտրոններից է Արքայան խալիֆայության օրոք հիմնադրված Բաղդադ քաղաքի «Բայթալ Հիբրման» (Իմաստության տուն), որտեղ ամենատարբեր մասնավիտության տեր մարդիկ՝ զրիչներ, ծաղկողներ, մանրանկարիչներ, կազմարարներ աշխատում էին միասին և ստեղծում մեծաքանակ ձեռագրեր: Պատկերն ավելի գաղտնագերծված է արաբերեն քրիստոնեական մատենագրության գեպրում: Բոլոր մեծ և ազդեցիկ եկեղեցիներում, երբեմն նաև փոքրերում, արտագրվում և պահվում էին ձեռագիր մատյաններ: Եվ ահա հենց այս եկեղեցիներում էլ աստիճանաբար սկսում էն յուրացնել նոր գիրը և օգտագործել արաբերենը որպես գրական լեզու: Արդեն մինչեւ Թ դարը գոյություն ուներ հարուստ աստվածաբանական դրականություն արաբերնով: Իսկ ժ դարում արաբերենը կիրառվում էր քրիստոնեական բոլոր ուղղություններում:

Հ դարից սկսած Պաղեստինի քաղկեդոնական եկեղեցիները, և հատկապես Մար Սարան (‘مار سارا’), որոնցում Դ-Հ դարերում որպես աստվածարանական լեզու գերիշխող էր հունարենը, հանդես են գալիս որպես քրիստոնեական մատենագրությունն արաբերենի վերածած առաջին կենտրոններ⁵:

⁴ Orsolya Varsányi, “Mapping the Semantics of Dīn (Religion) in 9th-century Arabic Christian Controversy”, *The Arabist Budapest Studies in Arabic* 38, ed. K. Dévényi, Budapest, 2017, pp. 71-94.

⁵ Sidney Griffith, “The Monks of Palestine and the Growth of Christian Literature in Arabic”, *The Muslim World* 78, 1988, p. 4. Խովնի՝ “From Aramaic to Arabic: The Languages of the Monasteries of Palestine in the Byzantine and Early Islamic Periods”, *Dumbarton Oaks Papers*, vol. 51, 1997, pp. 11-31.

Թ դարի առաջին կեսին ծավալվում է հունարենից արաբերեն թարգմանությունների հզոր շարժում, որ հովանավորվում էր խալիֆաների կողմից (Հատկապես ալ Մա’մուն խալիֆայի օրոք (813-833 թթ.)): Թարգմանությունները, ինչպես նշել ենք, հաճախ կատարվում էին ասորերենի միջնորդությամբ: Թարգմանվում են փիլիսոփայությանը, աստղագիտությանը, բնական գիտություններին, աշխարհագրությանը նվիրված Արիստոտելի, Գալենոսի, Հիպոկրատեսի, Դիոսկորիդեսի, Պլատոնի և այլոց արժեքավոր աշխատությունները: Այս թարգմանություններն իրականացնող քրիստոնյաներն իրենց կարողությունների շնորհիվ մեծ հարգանք և կարենորություն ունեին արքունիքում և արար վերնախավի շրջանակներում: Հատկապես ակտիվ էին նեստորականները, որոնցից պետք է հիշատակել Աբու Ջաքարիա Յուհաննա իրն ալ Բաթրիկի, Հումայն իրն Խանակի, Յուհաննա իրն Մուսավայջի, Տիմոթեոս Ա կաթողիկոսի, Արդ ալ Մասիհ ալ Քինդիի անունները:

Արաբերենով քրիստոնեական աշխատությունների շարքում հատկապես շատ են աստվածաշնչան թարգմանությունները: Նման բովանդակությամբ պահպանված ձեռագրերի թիվն անհամար է: Դրանց մի զգալի մասը ներառված են եվրոպական այնպիսի հավաքածուների մեջ, ինչպիսիք են Օքսֆորդի Բոդլեյան դրադարանը, Լոնդոնի Բրիտանական թանգարանը, Ֆրանսիայի Ալզային գրադարանը և այլն: Արևելքում պահպող հավաքածուներից հատկապես արժեքավոր են Մինայում Սուրբ Կատարինեի վանքում պահպողները: Արաբերենով պահպանված աստվածաշնչան հնագույն ձեռագրերից են *Sinai Arabic 151* (մ.թ. 867), *Sinai Arabic 72* (մ.թ. 897), *Vatican Arabic 13* (Թ դար), *Sinai Arabic 154* (Թ դար):

Միջնադարյան քրիստոնյա արաբական առնչությունների դիտակ, արևելագետ Միքնել Գրիֆֆիթն իր զրում անդրագաղութ է արաբերենով առաջին աստվածաշնչան և աստվածաբանական մեթստերի թարգմանություններին՝ նշելով, որ նախախլամական շրջանում արաբերեն Աստվածաշնչի գոյության մասին փաստեր շեն պահպանվել, իսկ երրայերեն Աստվածաշնչի արաբերեն թարգմանության ամենավագ պահպանված օրինակը թվագրվում է Թ դարով: Այն համարվում է արաբերենով աստվածաշնչան թարգմանությունների շարժման սկիզբը⁶: Հաջորդ դարերում արդեն աստվածաշնչան

⁶ Sidney H. Griffith, *The Bible in Arabic: The Scriptures of the “People of the Book” in the Language of Islam*, New Jersey: Princeton University Press, 2013.

ձեռագրեր ընդօրինակելն ավելի յայն տարածում է ստանում: Հայտնի է նաև, որ արդեն ժամանակակից աշխատավոր թագավորությունների մասնագիտական կարողություններ ունեցող զպահներ, որոնք վարպետացել էին արաբերեն Աստվածաշունչ արտագրելու գործում⁷:

Եվրոպական գիտական աշխարհին Աստվածաշնչի արաբերեն թարգմանությունները հայտնի են դառնում առաջին հրատարակությունների շնորհիվ, որոնց թվում պետք է առանձնացնել 1590-1591 թվականներին տպաղրված արաբերեն, արաբերեն-լատիներեն պատկերագարդ Ավետարանները⁸: Հիշատակության են արժանի նաև Ագոստինո Ջուստինիանիի բազմակեզու սաղմոսարանը⁹, իսկ ավելի ուշ Փարիզի (1628-1645 թթ.) և Լոնդոնի (1653-1657 թթ.) հայտնի հրատարակությունների արաբերեն հատվածները: Այդուհետ գիտնականներն օգտվում էին հենց այս հրատարակություններից որպես արաբերեն Աստվածաշնչի հիմնական աղբյուր: Միայն ժթիկա գարում ձեռագործեց նոր մոտեցում հարցի շուրջ: 1888 թվականին իտալացի արևելագետ Իգնատիո Գուիդին հրատարակեց մի արժեքագոր ուսումնասիրություն արաբերենով և եթովպերենով պահպանված աստվածաշնչան թարգմանությունների մասին, որտեղ առաջ էր քաշում ձեռագրերի բնադրային համեմատության սկզբունքը, մատնանշում դրա կարևորությունը և թարգմանությունները ենթարկում ծագումնաբանական ճյուղային հետազոտության՝ ընդգծելով տարբեր ճյուղերի առանձնահատկությունների վերանման կարևորությունը: Թարգմանությունների, դրանց հետազոտությունների, կրած փոփոխությունների միջոցով բացահայտվում էին ժամանակի պատմական, մշակութային, սոցիալական և կյանքի այլ բնագավառներին վերաբերող փաստեր¹⁰: Գուիդիի մոտեցումն անկյունաբարային է դառնուում հետազարդությունների համար: Նման քննադատական-վերլուծական

⁷ Ronny Vollandt, "Making Quires Speak: An Analysis of Arabic Multi-Block Bibles and the Quest for a Canon", *Intellectual History of the Islamicate World*, vol. 4, Brill, 2016, pp. 170-209.

⁸ *Gospels in Arabic (Evangelium sanctum Domini Nostri Iesu Christi conscriptum a quatuor Evangelistis Sanctis idest, Matthaeo, Marco, Luca, et Iohanne)*, Rome, Medici Oriental Press, 1590-1591.

⁹ *Psalterium Hebraicum, Graecum, Arabicum, & Chaldaeum, cum tribus latinis interpretationibus & glossis*, ed. by Agostino Giustiniani, Genoa, 1516.

¹⁰ Ignazio Guidi, *Le Traduzioni Degli Evangelii in Arabo e in Etiopico*, (Atti della Reale Accademia dei Lincei), vol. 4, Rome: Academia Dei Lincei, 1888.

մոտեցում պահպանվել է նաև գերմանացի ականավոր արևելագետ, աստվածաբան Գեորգ Գրաֆի հայտնի «Գրիստոնյա արարական գրականության պատմություն» աշխատության հատորներում¹¹:

Արաբերեն առաջին թարգմանությունների շարքում Հին և Նոր Կոտակարաններից բացի թարգմանվել են աստվածաշնչան պարականուններ, վարքեր, հայրարանական գործեր և այլ աստվածարանական տեքստեր: Ձոշուա Բլաուի բնութագրմամբ այս թարգմանությունների լեզուն միջին արաբերենն է, որ տարածվել է անմիջապես արաբական արշավանքներից հետո և կարելի է գտնել Ը Թ գարերում Պաղեստինում գրված արաբերեն քրիստոնեական ձեռագրերում¹²: Ժ-Ժ գարերում քրիստոնեական շրջանակներում ստեղծվում են նաև արաբերեն-ասորիերեն բառարաններ, ինչպես եղիա Մծրնացու և Բար Բահրուի հայտնի բառագրերը:

Ամենավաղ արաբերեն քրիստոնեական աշխատությունները սովորաբար անանուն են: Մեզ անունով հայտնի առաջին արաբ քրիստոնյա մատենագիրները Թ գարից են՝ մելքիս աստվածարան Թեոդորոս արքու Կուրրան, Տակրիսի և պիսկոպոս հակոբիկ Հարիր իրն Խիդմա արքու Խայիթան, Արդ ալ Մասիհ իրն Խահմա ալ Հիմսին, նեսոռական աստվածաբան՝ Ամմար ալ Բասրին, որոնց փոխարինելու են կալիս Ժ գարի հակոբիկ մատենագիր Արու Ջաքարիա Յահիա իրն՝ Արի ալ Տակրիսին, Ժ գարի մատենագիրներ Յահյա իրն Սահիդ ալ Անթաքին, Արու Ալի Խաս իրն Ջուր'ան, Ժ գարից Միքայիլ Ասորին, Ժ գարից Բար Հերբեոսը և ուրիշներ:

Ժ գարը հայտնի է որպես զպտի-արաբական գրականության ձագկման ժամանակաշրջան: Հատկապես աշքի են ընկնում Հեղինակներից Ջիրջիս ալ Մարինը, Արու Խոհակ Իրրահիմ իրն ալ Ասսալը, Բութրուս ալ Խահիրին և ուրիշներ:

Ժ և Ժ գարերը Միջին Արևելքի քրիստոնյաների համար անկման ժամանակաշրջան են, որ հատկանշվում են մուսուլմանների անհանդրժողականության լայնածավալ զրակորումներով: Այս շրջանի շատ քիչ ձեռագրեր են հասել մեզ: Ժ գարերի ակնառու գեմքերից է մարոնի Ջիրրախլ (Գարրիկի) իրն ալ Կիլա՛ին, ով շարադրել է մարոնիների պատմությունը:

¹¹ Georg Graf, *Geschichte der Christlichen Arabischen Literatur*, 5 volumes, Biblioteca Apostolica Vaticana, 1944-1953.

¹² Joshua Blau, *The Renaissance of Modern Hebrew and Modern Standard Arabic: Parallels and Differences in the Revival of Two Semitic Languages*, (UC Publications in Near Eastern Studies), vol. 18, University of California Press, 1982.

ԺԵ-ԺԼ՝ դարերում գարդացում է ապրում մարոնիների մատենագրությունը, առանձնանում են Խմբեֆան ալ Դուայջին և հատկապես Ջիրրախի (Դաբրիել) Ջիրմանոս Ֆարհամթը:

Զեռագրերի ստեղծման և ընդօրինակման գործին զարկ է արվում Յսմանյան շրջանում սկսած ժԷ դարից, երբ արար քրիստոնեական համայնքները՝ հատկապես Աւանտում, սկսում են աստիճանաբար վերականգնվել: Այս շրջանից մեզ են հասել մեծաքանակ ձեռագրեր՝¹³:

Արաբերենով գրված քրիստոնեական մատենագրությունը մեծ թիվ է կազմում: Սակայն այս հակայածավալ օվկիանոսի շուրջ 90 տոկոսը մինչև օրս շարունակում է մնալ շուտումնասիրված, յոպագրված և պահպանվում է միայն ձեռագրերի տեսքով¹⁴: Ավելին, դրանց մի մասն անդամ ամփոփված չէ ձեռագրացուցակների մեջ, թարգմանված չէ և հասանելի չէ զիտական լայն շրջանակներին: Խսկ երրեմն էլ ձեռագրացուցակներում ձեռագրերի նկարագրությունները շատ ընդհանրական են և չեն ներառում տեղեկություններ փոքր միավորների մասին: Այսպիսով, հաշվի առնելով նյութի կարերությունը, սկզբունքային ենք համարում նախևառաջ մշակել տարբեր հավաքածուներում ընդգրկված արաբերեն քրիստոնեական ձեռագրերի, դրանցում ամփոփված մեծ և փոքր միավորների տվյալները և դրանք հասանելի դարձնել գիտական հանրությանը: Այս նպատակին ուղղված մի համեստ ներդրում է սույն ձեռագրացուցակի կազմումը՝ որպես հետազարյալ մտքում պահելով մեծաքանակ քրիստոնյա արաբական մատենագրական ընդգրկմամբ թվային շտեմարանի կամ հարթակի ստեղծումը, որն օժտված կլինի հարուստ անվանացանկերով և փնտրման բազմադաշտ հնարավորություններով:

Անշուշտ, Գեորգ Գրաֆի վերոհիշյալ «Քրիստոնյա արաբական գրականության պատմություն»-ը բնագավառում մինչև օրս կատարված կարելուրագույն, անկյունաբարային աշխատանքներից է: Սակայն Գրաֆի աշխատությունից հետո ի հայտ են եկել ձեռագրերի նոր շարքեր (օրինակ 1960-ական թվականներին շրջանառության մեջ դրված Սուրբ Կատարինեի վանքի արաբերեն ձեռագրերը), որոնք ներառված չեն ուսումնասիրության մեջ:

¹³ Alexander Treiger, “The Arabic Tradition”, in *The Orthodox Christian World*, ed. Augustine Casiday, London: Routledge, 2012, pp. 89-104.

¹⁴ Տե՛ս նույն տեղում, էջ 99:

Արաբերեն քրիստոնեական գրականությանն են նվիրված նաև Լուիս Շեյխոյի (لويس شيخو) ուսումնասիրությունները, և հատկապես նրա հեղինակած արաբերեն քրիստոնեական ձեռագրերի, դրանց հեղինակների և հմանական ստեղծագործությունների ընդարձակ ցուցակը¹⁵, Մելքիտ եկեղեցու պատմությունն ուսումնասիրող ժողեփ Նատալյանի Գրանդսանկաներին հասողները¹⁶ և այլ հեղինակների հոդվածներ, մենագրություններ, հետազոտություններ:

Շեյխոն արաբերեն քրիստոնեական ձեռագրերի մասին իր աշխատությունում տապահ է ամփոփ տեղեկություններ արաբագիր քրիստոնյա մատենագիրների, նրանց գործունեության ժամանակաշրջանի և ոլորտների, հեղինակած աշխատանքների մասին: Նշվում է նաև, թե աշխարհի խոշորագույն կինորոններից որտեղ են պահվում նրանց հեղինակած ձեռագրերի օրինակները¹⁷: Օգտվելով Շեյխոյի և այլ հեղինակների աշխատություններից՝ քաղել ենք տվյալներ տարբեր հեղինակների մասին և այդ նյութով լրացրել մեր աշխատանքը:

ՄԱԾՏՈՑՅԱՆ ՄԱՏԵՆԱԿԱՐԱՄԵՐԸ ԱՐԱԲԵՐԵՆ ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԶԵՐԱՎՐԵՐԻ ՀԱՎԱՐԱԾՈՒՅՆԵՐԸ

Արաբերեն քրիստոնեական ձեռագրերի հավաքածուներ կան աշխարհի տարբեր պահոցներում, ձեռագրատներում: Արևելքում զտնվողներից առավել հայտնի են Սինայ լեռան¹⁸, Բեյրութի սր. Հովհանքի կաթողիկ համալսարանի¹⁹, Կահիրեի զպատական հայրապետական թանգարան-գրադարանի ձեռագրային հավաքածուները²⁰: Արևելուտ պահնվողների մեջ իրենց ծագալով և հարուստ նյութով հատկապես առանձնանում են Վատիկանի²¹ և

¹⁵ Louis Cheikho, *كتاب المخطوطات العربية لكتبة النصرانية*, Dar El-Machreq, Beirut, 2000.

¹⁶ Joseph Nasrallah, *Histoire du mouvement littéraire dans l'église melchite du Ve au XXe siècle*, 3 vols. in 6 parts, Louvain, 1979-1989.

¹⁷ Տե՛ս նոյն 15:

¹⁸ Margaret Gibson, *Catalogue of the Arabic MSS. in the Convent of S. Catharine on Mount Sinai*, (Studia Sinaitica), no. III, Cambridge University Press Warehouse, 1894.

¹⁹ Louis Cheikho, *Catalogue raisonné des manuscrits historiques de la Bibliothèque Orientale de l'Université Saint-Joseph*, Beirut: Mélanges de l'Université Saint-Joseph, 1913-1929.

²⁰ Georg Graf, *Catalogue de manuscrits arabes chrétiens conservés au Caire*, (Studi e testi 63), Biblioteca Apostolica Vaticana, 1934.

²¹ Angelo Mai, *Scriptorum veterum nova collectio è Vaticanis codicibus*, vol. IV, Romae, 1831.

Փարիզի²², Մինդանայի քրիստոնեական արարական ձեռագրերի հավաքածուները: Միայն վերջինիս հավաքածուն ընդգկում է 600-ից ավելի միավոր²³:

Թվաքանակով ավելի համեստ, սակայն իրենց կարևորությամբ վերոնշյալներին չզիշող հավաքածուներ կան Բրիտանական թանգարանում²⁴, ջոն Ռայլանդսի²⁵, Հալեպի մարոնիական գրադարաններում²⁶, Կիբանանի Բարձամանդի գանքի ձեռագրերի պահոցներում²⁷, Կահիրեի արևելաբրիստոնեական ուսումնասիրությունների ֆրանցիսկյան կենտրոնում²⁸ և այլուր:

Երեանի Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի 2732 Արարատառ ձեռագրերի հավաքածուի մաս են կազմում արաբերեն քրիստոնեական մատենագրության 58 ձեռագիր-օրինակներ: Նախկինում այս ձեռագրերի համառոտ նկարագրություններն ընդգրկվել են հայ արևելագետ, թարգմանիչ, երկար տարիներ ԵՊՀ Արևելագիտության ֆակուլտետի Արարագիտության բաժնի դասախոս Հովհաննես Ասատրյանի (1947-2015) կազմած արաբերեն ձեռագրերի²⁹, նաև 1940-ական թվականներին կազմած արարատառ ձեռագրերի անտիպ ցուցակներում (23 մատյան)³⁰:

²² Le Baron de Slane, Catalogue des Manuscrits Arabes, Paris, Imprimerie Nationale, 1883-1895.

²³ Alphonse Mingana, Christian Arabic Manuscripts and Additional Syriac Manuscripts, (vol. II of Catalogue of the Mingana Collection of Manuscripts), Cambridge, 1936.

²⁴ William Cureton and Charles Rieu, Catalogus codicum manuscriptorum orientalium qui in Museo Britannico asservantur. Pars secunda, codices arabicos amplectens, London, 1846-1871.

²⁵ Alphonse Mingana, Catalogue of the Arabic Manuscripts in the John Rylands Library, Manchester, Manchester University Press, 1934.

²⁶ Francisco del Río Sánchez, Arabic Manuscripts in the Maronite Library of Aleppo (Syria), Edicions de la Universitat de Barcelona, 2017.

مكاريوس جبور، فهرس مخطوطات مكتبة أبي شيبة حلب المارونية، المجد الأول، حلب، 2018

²⁷ مجموعة مؤلفين، المخطوطات العربية في الأئية الأرثوذوكسية الأرثوذوكسية في لبنان الجزء الثاني: دير السيدة البلمند، بيروت، جامعة البلمند، 1994.

²⁸ William F. Macomber, Catalogue of the Christian Arabic Manuscripts of the Franciscan Center of Christian Oriental Studies, Muski, Cairo, Franciscan Printing Press, 1984.

²⁹ Հովհաննես Ասատրյան, Անտիպ ցուցակ արաբերեն ձեռագրաց, Մաշտոցյան Մատենադարան, Երևան (Հերատարակված):

³⁰ Ցուցակ արարատառ ձեռագրերի (23 մատյան), Մաշտոցյան Մատենադարան, Երևան (Հերատարակված):

Ձեռագրերը Մատենադարանի Արարատառ հավաքածուի շարքերն են համալրել մեծամասամբ նվիրատվությունների շնորհիվ: Հմբ 335 ձեռագիրը Մատենադարանի Արարատառ ձեռագրերի հավաքածուն է համալրել 1920 թվականին, նվիրատուի անունը, ցագոր, չի պահպանվել: Նվիրատուների թվում են Միհրան Մինասևանը (բաներեք ձեռագիր՝ Հմբ 1996, 2256, 2257, 2258, 2259, 2260, 2261, 2262, 2263, 2264, 2265, 2266, 2267, 2268, 2269, 2270, 2271, 2272, 2385, 2386, 2387, 2388, 2389), Վարուժան Սալաթյանը (ինը ձեռագիր՝ Հմբ 1738, 1741, 1753, 1755, 1756, 1757, 1762, 1763, 1765), Արշակ Դանագովյանը (ինը ձեռագիր՝ Հմբ 1153, 1154, 1155, 1156, 1160, 1161, 1162, 1180, 1189), Հովհաննես Պասմաճյանը (յոթ ձեռագիր՝ Հմբ 1044, 1045, 1046, 1961, 1976, 2082, 2083), Ճործ Խորովյանը (Երկու ձեռագիր՝ Հմբ 1127, 1130), ՀՀ ԳԱԱ պատվավոր դոկտոր, լոնգոնարնակ Վրեժ (Տիր ներսին ավագ քահանա) Ներսեսյանը (Երկու ձեռագիր՝ Հմբ 2727, 2730), Գրիգոր Գ. Բարսեղեանը (Երկու ձեռագիր՝ Հմբ 1014, 1977), տեր (Հրաշ) և տիկին Աւետիսիանները (մեկ ձեռագիր՝ Հմբ 1997), Ռուբեն Գ. Պարսումյանը (մեկ ձեռագիր՝ Հմբ 2092), ևս մեկ ձեռագիր նվիրաբերել է «Փյունիկ» բարեգործական հիմնադրամը (Հմբ 2282):

Ձեռագրերը ԺԷ-ԺԹ գարերի են՝ հիմնականում գրված Միրիայում և Կիբանանում, բացառություն են միայն ձեռ. Հմբ 335-ը, որը գրվել է Եգիպտոսում և Հմբ 1160-ը, որը գրվել է Անտիոքում:

Գրչության ժամանակը հիշատակվել է ըստ ձեռագրերի գրչության ժամանակի հիշատակարանների հաղորդած տվյալների, իսկ դրանց բացայտության դեպքում որոշվել է ընդօրինակման մոտավոր ժամանակաշրջանը՝ հիմք ընդունելով որոշ ձեռագրագիտական տունների հատկություններ:

Արաբերեն քրիստոնեական ձեռագրերին, ընդհանուր առմամբ, հատուկ շեն նիստարարդումներն ու մանրանկարները: Այդ իսկ պատճառով ձեռագրերն աշքի շեն ընկնում իրենց գեղագիտական արժեքով. մանրանկարները, գարդանախշերն ու յուսանցազարդերը սակավաթիվ են: Մեր ձեռագրերի շարքում հիշատակելի են միայն Երկու ձեռագիր (Հմբ 1753 և 2730), որոնցում կան մանրանկարներ:

Ժանրային և բովանդակային առումով ձեռագրերը բազմազան են: Կան ինչպես Ավետարաններ, աղոթագրեր, մտորումներ աստվածաբանական թեմաների շուրջ, այնպես և հրաշագործությունների մասին պատմություններ,

բարոյախրատական բովանդակությամբ աշխատություններ: Դրանց շարքում են նաև ջիրմանոս ֆարհաթի (ձեռ. Հ^Յ 2083, 2389) և նիկոլաոս Սահղի (ձեռ. Հ^Յ 1741, 1756, 2387, 2388) հեղինակած բանաստեղծությունների ժողովածուները: Վերջին երկուսը, ինչպես նաև Սիրամի գիրքը (Հ^Յ 1153), Յուհաննա Կլուզիոս Վերթերիոլի աստվածաբանական աշխատությունը (Հ^Յ 2386) հաճախ են հանդիպում տարբեր պահոցներում պահպող ձեռագրերի շարքում:

Զեռագրերը նկարագրելիս պահպանել ենք միօրինակության սկզբունքը: Հարցակարգն այսպիսին է՝

1. Զեռադրի համար
2. Հեղինակի անուն
3. Վերնագիր
4. Գրչության վայր
5. Գրչության թվական
6. Գրչի անուն
7. Առաջնադրություն (կամ պատվիրատուի) անուն
8. Թերթ (արձանագրված է նաև շգրված թերթերի քանակը)
9. Պրակ
10. Նյութ (թղթի տեսակը)
11. Մեծություն (սանտիմետրով)
12. Գիր
13. Թանաք
14. Հիշագիր
15. Տող
16. Կաղմ
17. Պահպանակ
18. Մանրանկարչություն
19. Վիճակ
20. Բովանդակություն

6384

21. Գրչության ժամանակի հիշատակարան

22. Հետագայի հիշատակարան

23. Կնքագրոշմ

24. Նշում

25. Գրչափորձ:

Նկարագրության ժամանակ նկատի են առնվել ինչպես ձեռագրերի ընդհանուր բովանդակությունը, այնպես էլ դրանցում տեղ գտած յուրաքանչյուր միավորը ներկայացնելու սկզբունքները: Անհրաժեշտության դեպքում արգել են ծանոթագրություններ: Բնագրերի գլխագրերը, ենթախորագրերը, առանձին միավորների սկիզբը և վերջը տրվել են համապատասխան էջերով: Ժողովածուների դեպքում թվարկել ենք, թե քանի գործ է ներառված և ըստ միավորների խորագրերի նշումով կատարել ենք յուրաքանչյուրի բովանդակային նկարագրությունը:

Զեռագրացուցակի վերջում բերվել են փնտրման գործընթացը հետազոտողների համար դյուրացնող ցանկեր: Էշանշանի, տիտղոսաթերթի, առաջարանի և հավելագրության առկայության դեպքում հարցակարգերն ավելացվել են նկարագրության կաղապարում:

Հեղինակների, գրիչների անունները տրվել են և արարերենով, և՛ հայերեն տառադարձումով: Անունների հիշատակման ժամանակ ուղղանկյուն փակագծերի մեջ առնվել են անունների հայերեն համարժեքները: Տառադարձումներն արգել են համաձայն Արամ Տեր-Ղևոնդյանի «Իրն ալ-Ասիր» գրքում ներմուծված պայմանական տառադարձության համակարգի³¹:

Նկարագրության ժամանակ օդտաղործվել է հետեւյալ նշանային համակարգը՝

||| թեքագծերով նշվում է բառի կամ հասկածի անընթեռնելի լինելը,

[] ուղղանկյուն փակագծերում կազմողի կատարած ավելացումներն են:

Զեռագրերում հանդիպող արաբերեն բառերը կամ բառակապակցությունները, որոնցում կան թվայցալ ուղղագրական կամ քերականական անձշտություններ, ձեռագրացուցակում ներկայացվել են առանց փոփոխման՝ պահպանելով ժամանակի լեզվական առանձնահատկությունները և

³¹ Իրն ալ-Ասիր, աշխ. Ա. Տեր-Ղևոնդյանի, (Օտար աղբյունները Հայաստանի և հայերի մասին, Արաբական Աղբյուններ թ), Երևան, 1981, լշ 32-33:

հաջորդիվ կրում են (՞՛) բառ՝ որպես ցուցիչ, թե այդպես է արձանադրված ձեռագրում: Եթե բառն անհասկանալի է կամ վերականգնելը դյուրին չէ, որպես կանոն, զրան հաջորդում է բառի/բառակապակցության վերականգնված ձեր՝ առնված [] ուղղանկյուն փակագծերի մեջ:

Որոշ բառերի շեղումները բառարանային ձեից հաճախակի են: Ալլապիսին է «Կույս» (العذر، العذر، العذر) բառը, որը հանդիպում է (العذر، العذر، العذر) և այլ ձևերով: Բազմաթիվ են բառավերջում արաբերեն թա մարքուաա-ի (۶) և յա-ի (۷) կիրառությունները՝ առանց համապատասխան կետերի: Նման դեպքերում բառի բառարանային ձեից շեղված լինելն ընդգծվում է միայն ձեռագրացուցակում հանդիպող առաջին մի բանի օրինակներում:

Այստեղ շենք անդրադառնա հավաքածուում տեղ գտած բոլոր ձեռագրերի մանրամասներին: Դրանք քննարկվում են նկարագրության համապատասխան բաժիններում: Հավաքածուի ամենահին ձեռագիրն է Հ^մ 2727-ը, որն ըստ պահպանված հիշատակարանի հավանաբար գրվել է 1592-1606 թթ. միջակալրում:

Բացառիկ ձեռագիր է «Ալ Թաֆնիդ լիլ Մաջմա՝ ալ Անիդ» (التحذيد للمجمع العظيم) շիատությունը (Հ^մ 1757), որը ժի դարում արաբատառ տպագրության հիմնադիրներից մեկի՝ հայտնի աստվածաբան՝ Արդալլահ Զախերի ինքնագիրն է:

Հիշատակման են արժանի նաև Հ^մ 2256-2272 ձեռագրերը, որոնք Կարդինալ Օրսիի հեղինակած «Եկեղեցական պատմություն» աշխատության 17 հաստափոր հատորներն են:

Բովանդակությամբ աշքի է բնկնում նաև Հ^մ 1154 ձեռագիրը: Այն ներառում է Հայ Առաքելական եկեղեցուն ուղղված քննադատական աշխատություն, որտեղ քննության է առնվում Առաքելական եկեղեցու հեռացած լինելը (ըստ հեղինակի) սր. Գրիգոր Լուսավորչի նախնական ուսմունքից:

Ալսպիսով, շրջանառության մեջ գնելով Մատենադարանում պահպանված բրիտանական ձեռագրերի նկարագրությունները, հնարագրություն ենք բնձեռում հայ և օտարագգի հետազոտողներին ընդլայնել իրենց ազբյուրագիտական ուսումնասիրությունների շրջանակները:

* * *

Աշխատանքը հնարագոր չէր լինի ավարտին հասցնել առանց մի շարք մարդկանց աջակցության:

Երախտագիտություն ենք հայտնում Մատենադարանի երջանկահիշատակ տնօրեն Հրայրա Թամրազյանին, Արևկայիս տնօրեն, Արևելագիտության բաժնի վարիչ Վահան Տեր-Ղեոնդյանին՝ աշխատանքը մեզ վստահելու և ամեն հարցում պատրաստակամորեն օժանդակելու համար:

Խորին շնորհակալություն ենք հայտնում Արևելագիտության բաժնի աշխատակիցներ Անի Ժ. Ավետիսյանին և Միհրան Մինասեանին՝ իրենց անգնահատելի ներդրումի և հատորյակի դժվարին խմբագրական աշխատանքներն իրականացնելու համար:

Երախտապարտ ենք նաև Մատենադարանի դիմավոր ավանդապահ Գեորգ Տեր-Վարդանյանին, Ընթերցասրահի, Թվայնացման և Հրատարակչական բաժնի գործընկերներին՝ ցուցաբերած օժանդակության համար:

* * *

Մաշտոցյան Մատենադարանի ղեկավարության որոշմամբ ստանձնել եմ Մատենադարանի արարերեն քրիստոնեական ձեռագրերի ցուցակն ավարտին հասցնելու պատասխանատվությունը: Ստացել եմ բաժնի նախկին աշխատակից Մովսես Խեցյալի կատարած անագրատ աշխատանքը, հեղինակին տեսնելու և իր հետ աշխատելու հնարագրություն չեմ ունեցել: Աշխատանքն ամրողացրել և ավարտին եմ հասցրել համապատասխան շտկումներով, հավելումներով և նոր ձեռագրերի նկարագրություններով:

Էսթեր Պետրոսյան

ԹՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԶԵՐԱԳՐԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

1

335

ՍՈՒՐԲ ՄՅՈՒԹՈՒՆԻ ՀՈԿԻՐՁ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ
ԵՎ ԱՄՔՈՂՋԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԵՂԱՆԱԿԸ

ملخص تاريخ المiron و كامل صفة طبخه

ԿՈՀԻԹ (Ողդափառ դպտիների պատրիարքարան) 1899 թ.

ԳՐԻՉ՝ 'Արդ ալ Մասիհ Սալիբ ալ Մաս'ովի ալ Բարմուսի (صليب المسح)
(ابن مسحون المطربي):

ԱՏԱՅՈՂ՝ Պատրիարք Կիրիլ V Ալեքսանդրիայի 112-րդ պատրիարքը
(بطريرك أنبا كيرلس):

ԹԵՐԹ 21 (ունի արաբական թվերով էջակալում՝ ۱۳۳, որ է 3w-19w).
շգրված՝ 1p-2w, 8p, 19p-21p; ՊՐԱԿ V (12), V-1 (21); ՆՅՈՒԹ՝ արևմտյան
բուլղ. ճնշագծերով, լուսագծերով և ճնշատողերով; ՄԵՇՈՒԹՅՈՒՆ՝ 18.1x12.8;
ԳՐՈՒԹՅՈՒՆ՝ միասյուն (13.5x8.5); ԳԻՐ՝ քանասիք; ԹԱՆԱՓ՝ սև, կարմիր,
խորագրեր՝ կանաչ, կարմիր; Հիշագիր: ՏՈՂ՝ 15; ԿԱԶՄ՝ դրոշմազարդ (ոսկի)
բաղադրյալ շրջանակով (ոսկի) շագանակագույն կաշի, մեջտեղում՝ խաչ
(ոսկի), միջուկը՝ ստվարաքուղ, աստաղը՝ նախշազարդ թուղթ (խաչ, ծաղիկ),
լուսանցակողեր՝ ոսկի: ՊՈՀՊՈՆԱԿ՝ 4 (ԱԲ+ԳԴ), նախշազարդ, բաց կանաչ
շգրված բուլղ:

ՎԻՃԱԿ՝ բավարար:



Խմուշ 3w

ԹՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Դրոխներ Դպտի եկեղեցու սր. Մյուսոնի պատրաստման պատմության,
պատրաստման արարողակարգի և եղանակների մասին:

Ներկայացված է 4 բաղադրատոմս (Ա՝ 9w-10w, Բ՝ 10w, Գ՝ 10p,
Դ՝ 11w), մեջբերվում է իրն Շամին ալ Մութատարիքի (ابن شحون المطربي)
«Թեղերի հավաքածու» (جامع الأدوية المفردة) աշխատության Գ զիսի բար-
սանի փորձարկման մասին հատվածը, ինչպես նաև Մյուսոնի պատրաս-
տման եղանակն ըստ Անբա Յուսանեսի (أنبا يوأنس) բաղադրատոմսի:

Ակիզք (3w)

بسم الآب والروح القدس الواحد تاريخ الميرون المقدس عند الأقباط

Վերջ (19w)

ونسال من القاري صالح الدعاء والمجد لالهنا الصالح إلى أبد الآدبين أمين

Տիտղոսաբեր՝ 2p

ملخص تاريخ المiron و كامل صفة طبخه

Ա. 3w-8w

تاريخ الميرون المقدس عند الأقباط قد لخصناه من كتب تاريخ أعمال الميرون الموجودة
بالبطركخانة القبطية الإثيوبية (كذا)

Բ. 9w-12w

بسم الثالوث المقدس صفة طبخ المিرون المقدس

Գ. 12w-3p

صفة لامتحان الأقاويم العطريه و اختبارها على ما حرر من كتاب الحكمه المسمى
بمفروقات ابن البيطار التي اعدت لهذا العمل

Դ. 14wр

امتحان دهن البلسان و اختباره من الجزء الثالث من كتاب جامع الأدوية المفردة لابن
شمدون المطربي

Ե. 14p-5w

امتحان الدست المطبوع بالاقاويم العطريه ليعلم بذلك ان كان الماء قد ذهب وصار
الزيت وحده بلا ماء

Զ. 15w-6p

ختام خبر صفة طبخ المiron مع ذكر زيادة اسماء وأوزان مفردات ميرون البطاركه
المتأخرین

Է. 16p-9w

وهذه صفة الميرون الذي عمله انبأ يوانس المايه والثالث الذي هو احد البطاركه
المتأخرین

15w

قد نقلت صفة طبع المironون المقدس السابقة اي اسماء الاقلوية ووزانها وامتحاناتها عن كتب تاريخ اعمال المironون على يد القucus عبد المسيح صليب المسعودي البرموسي بالبطرخانة القبطية الارثوذكسيه بالازبكية بالقاهره بامر قدس السيد الاب الطمير يكيرلس ١١٢ من بطاركة الاسكندرية وكان نقلها سنة ١٦١٥ للشهداء الموافقة ١٨٩٩م وهي حسب الاصل بالتحرير بلا زياده ولا نقص

19w

وكان الفراغ من جمع ونسخ ملخص تاريخ المironون هذا وصفة طبخته كاملة في شهر برموده سنة ١٦١٥ قبطيه الموافق ابريل سنة ١٨٩٩ افرنكه عن كتب تاريخ اعمال المironون مع ترتيب عمله على يد القucus عبد المسيح صليب المذكور ببطرخانة القبط الاقباط بالازبكية بالقاهره ونسال من القاري (كذا) صالح الدعاء والمجد لالهنا الصالح الى ابد الابدين آمين.

2

1014

[ԺՈՂՈՎԱԾՈՒ]

[مجموع]

1795 p.

ԳՐԻՉ՝ Զիրքակի վալադ Մուսա Միղանի (جبرائيل ولد موسى ميداني):

ԹԵՐԹ՝ 81 (ունի արարանիշ թվերով կցակառում՝ 1-162, որ է 1p-81w). շգրված 33p, 34w, 81w: ՊՐԱԿ' II (4), I (6), 2V (26), IV (34), 4V (74), IV-1 (81): ՆՅՈՒԹ՝ արևմտյան բուլը. ննշազծերով, լուսազծերով, ննշատողերով, լուսադրշչով՝ եռամաշիկ: ՄԵՇՈՒԹՅՈՒՆ՝ 16.8x12.2: ԳՐՈՒԹՅՈՒՆ՝ միասյուն (11.5x6.5): ԳԻՐ՝ քանասիկ: ԹԱՆԱՔ՝ սև, խորագրերը, լուսանցագրերը, կարևոր հատվածները, կետերը՝ կարմիր: Հիշապիր: ՏՈՂ՝ 17: ԿԱԶՄ՝ շագանակագույն մոմլար, միջովկը՝ սպարաբուլը, աստառը՝ դիլնավուն բուլը: ՊԱՀՊԱՆԱԿ՝ 3 (Ա+ԲԳ), դեղնավուն շգրված բուլը:

ՎԻՃԱԿ՝ բավարար. նորոգված. պակասավոր միջից:

Վահագութեան մեջ առաջական գույնեան մասին

Առաջական գույնեան մասին
Առաջական գույնեան մասին
Առաջական գույնեան մասին
Առաջական գույնեան մասին

Նմուշ 1p

ԲՈՂԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Թնագիրը բաղկացած է երկու գրից:

1. Գիրք Ա. (1p-33w) «Ալ Անշիրիդիան» [կնքիրիդիոն (-ձեռնարկ)]³²

անշիրիդիոն

Բացի հիմնական 5 զլուխմերից, որոնցում հննարկվում են աստվածաբանական հարցեր, այս հատվածը ներառում է 2 նախարան՝ ուղղված եպիփան³³ բազարի եպիփան նիկեֆորոս (Կիրիկոս) Գրեգորասին 1p-3p)³⁴ և Նիկոլա Խուրիին (Նուլա, 3p-5p), ինչպես նաև բովանդակության ցանկ (6w):

Սկիզբ (1p)

بعد ان ابتدى مستغفينا باسم الثالوث القدس القديس القوي اعرض الى قداسة

Վարչ (33w)

لنا هذا بواسطة صلطانكم المقدسه وطلباتكم المستجابه امين

Ա. 7w-9p

القسم الاول في النهي عن البحث في حالتي الولده (كذا) والابناث

Բ. 9p-16p

القسم الثاني فيما سلمناه من الابا (كذا) في باب ابنة الروح القدس

Գ. 17w-24p

القسم الثالث في على اي وجه يقال لروح القدس روح الابن

Դ. 24p-6w

القسم الرابع في ان كان سلمتنا الابا ان نقول من الاب وحده

Ե. 26p-33w

القسم الخامس في ان كان من الاب وحده هل يجب ان تزداد في فلدون اليمان

³² Հունարեն՝ Ἐγχιρίδιον (Enchiridion):

³³ Սիրիակի Համա հաղակի հունական ծագմամբ անվանումը՝ Եπիփանεια (Epiphania):

³⁴ Հունարեն՝ Νικηφόρος Γρηγορᾶς (Nicephorus Gregoras):

2. Գիրք Բ. (34р-80р) Խսահակ Ասորի (اسحق السرياني)

Է դարի Արևելյան ասորական եկեղեցու ականավոր աստվածաբան, Նինվեի Եպիսկոպոս Խսահակ Նինվեցու (Խսահակ Ասորի) բարոյախրատական աշխատությունը, ունի նախարան և 35 զրոխ:

Նախարանում (34р) մեջբերվում է սարկավագ-քարզմանիշ՝ ‘Աբդալլահ իբն ալ Ֆայջ ալ Անտաբիի բարոյականությանը վերաբերող խոսք’
قال المترجم الفاضل الشهاب عبد الله ابن الفضل الانطاكي....

Սկիզբ (34р)

كتاب مختصر الى ابينا الجليل في القديسين مار اسحق السرياني

Վերջ (80р)

نصلي عن الكل حتى عن الاشرار والكافر والذين يوذونه والوحوش فهذا يكون منتبها بالله

Ա. 35ա-6բ

باب الاول قال القديس ان النفس المحبة لله تياحها في الله وحده

Բ. 36բ-8բ

باب الثاني ان اردت تعرف ان الله قد انعم على الانسان بالمعرفة

Գ. 38բ-42ա

باب الثالث ليس يدروا احد من الله الا من جهة الامانة

Դ. 42ա-7ա

باب الرابع سوال وجواب، سوال باى ربط يرتبط القلب

Ե. 47բ-8ա

باب الخامس عن ترتيب سيرة الرهبة واقسامها وكيف تولد الفضائل بعضها من بعض

Զ. 48ա-51ա

باب السادس في اقسام قتال المحال

Է. 51ա-2ա

باب السابع في اسباب المحن والاتضاع وما يقرب من الله تعالى

Ը. 52բ-3բ

باب الثامن في المقصود بالتوبة

Թ. 53բ-4ա

باب التاسع فيما ينبغي للراهب التمسك به

Ժ. 54բ-5ա

باب العاشر في الاعراض اللاحقة بالسكوت والدموع

ԺԱ. 55ար

باب الحادى عشر المراتب الثلاث التي ينفع بها الانسان

ԺԲ. 55բ-6բ

باب الثنائى عشر في صحة الرجا ومن هو الذى له ان يقول على الله

ԺԳ. 57ա

باب الثالث عشر في رفض العالم

ԺԳ. 57ար

باب الرابع عشر في ان ينبغي لذوى المكوت ان لا يكثروا الاهتمام والدخول والخروج
والتشيك بالأمور

ԺԵ. 57բ-9բ

باب الخامس عشر في السهر وينقطع العقل يوصلان الى معرفة الاسرار

ԺԶ. 59բ-60բ

باب السادس عشر في قوى الرذائل وفي الاشياء التي تقوم ومن اياها تقطع

ԺԷ. 60բ-1ա

باب السابع عشر في حفظ القلب والتصور اللطيف

ԺԸ. 61ար

باب الثامن عشر في امارات محبة الله تعالى

ԺԾ. 61բ-2ա

باب التاسع عشر في اصناف الفضائل وغير ذلك

Ի. 62բ-4ա

باب العشرون في ان نصوص دليما وتنزم موضعها واحدا وفيما تتولد من هذين

ԽԱ. 64ա-5ա

باب الحادى والعشرون في السكوت والهدوء

ԽԲ. 65ա-7ա

باب الثنائى والعشرون في ان النعم ترد على قدر احتمال المحن

ԽԳ. 67ա-8ա

باب الثالث والعشرون وانما عالمة المحن الوافدة عن تخلية الله على المتعطفين

ԽԸ. 68ա-9ա

باب الرابع والعشرون في اقسام الفضيلة وقوه كل واحده منها وفضله

ԽԾ. 69ա

باب الخامس والعشرون في طهارة الجسم وطهارة النفس وطهارة العقل

ԽԾ. 69ար

باب السادس والعشرون يتضمن اقوالا وشرحها معلوا من حكمة الروح

ԽԿ. 69բ-70բ

باب السابع والعشرون في التوبه

ԽԸ. 70բ-1բ

باب الثامن والعشرون في العلم والأمانه

ԽՊ. 71բ-2բ

باب التاسع والعشرون يتضمن اقوالا نافعه

Լ. 72բ-3ա

باب الثلثون في الخاطر الاول

ԽԸ. 73ա-3բ

باب الحادى والثلثون في العمل الثاني

ԽԾ. 73բ-4բ

باب الثنائى والثلثون في التغير الحادث في النفس في وقت النور والظلمه

19.74r-5a (պակասավոր վերջից)

باب الثالث والثلاثون يتضمن اقوالاً نافعه

19. 76ar (պակասավոր սկզբից)

... منتبه بالشيطان فإنه يضحك علينا اذا زلقنا

1b. 76r-7w

باب الخامس والثلاثون اذ لم يستولى عليك حب المسيح حتى يغلب الفرج به احزنك

19. 77ar

مير ايضاً له على سيرة السكوت

1b. 77r-8r

ايضاً رسالة الى أخيه لما طلب منه ان يربه كيف تقدر التوبه

1b. 79w-80r

و منه ايضاً رسالة الى اخ محب السكوت والوحدة

ԳՐՉՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ

1p

من كتب مالكه جبرائيل موسى ميداني سنة ١٨٠٣

3p

من الذليل تلميذ قدسكم خريسطودولس

80p

نفعه بيده الفانية جبرائيل ولد موسى ميداني في سنة ١٧٩٥ مسيحيه وكل من قرأ فيه او نظر اليه يدعوا له بالمغفره ولواليه وله نظير نظير (كذا) والله الحمد

ՆՇՈՒՄ 1w (կապոյտ քանակով) «Նվեր Հայաստանի Մատենադարանին

Գրիցոր Գ. Բարսեղեանից 10/11/1963 Գամակոս»:

1w «N 81014»:

80p սևականատիրոջ հետևյալ գրույրումը (մատիտով)

1963

1795

168

տարի:

ذكر صلاة الآيات للعزرا (كذا) المجيدة. ثم تقول هذه البيوت
مواضيعات تخص بجمعه العظيمة
مواضيعات رياضة ماري فرنسيس كسفاريوس

3

1044


ԱՂՋԹՔՆԵՐ ՀՈԳԻՆԵՐԻ ՓՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

صلوات لاجل خلاص النفوس

[ԺԵ դար]

ԹԵՐԹ՝ 27: ՊՐԱԿ' XIII (26)+1, (27): ՆՅՈՒԹ՝ արևմտյան բռութ. ննջագծերով, լրապատճենով, լրադրոշմներով՝ լատինատոն «LG», «MA», «BAN»: ՄԵԾՈՒԹՅՈՒՆ՝ 14.9x10.7: ԳՐՈՒԹՅՈՒՆ՝ միասյուն (10.2x6.8): ԳԻՐ՝ քանասի: ԹԱՆԱԿ՝ սև, խորագրերը՝ կարմիր: Հիշաղիր: ՏՈՂ՝ 13: ԿԱԶՄ՝ մուգ շագանակագույն կաշի, միջուկը՝ ստվարաթուղթ, աստաղը՝ նենջագիծ բռութ:

ՎԻՃԱԿ՝ բավարար. թերթերին աղտոտվածության հետքեր, կազմի կաշվին նախշազարդ թղթի հետքեր:



Նմուշ 2p

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Աղորքներ նիմիրված Մարիամ Աստվածածնին, սր. Յշանսիսկոս Քասաֆարիոսին, ինչպես նաև հատվածներ Ավագ Ռուբարի վերաբերյալ:

Սկիզբ (1w)

نبكي بعون الله وحسن توفيقه بكتابه بعض صلوات مفيدة لاجل خلاص النفوس

Վերջ (27w) (կազմաստանին փակցված)

يا سيدتي رديني لاني خرجت

Ա. 2p-18p

ذكر صلاة الآيات للعزرا (كذا) المجيدة. ثم تقول هذه البيوت

Բ. 18p-9p

مواضيعات تخص بجمعه العظيمة

Գ. 20w-1p

مواضيعات رياضة ماري فرنسيس كسفاريوس

ՀԱՎԵԱԿՐՈՒԹՅՈՒՆ. (աղոքներ, այլ ձևեր՝
ա. 1ա-2ա

منا الحزن والاغتمام وارسل ملاك ... اللاهوتي القدس ايتها القديسة مريم العذرا
اصل جميع البشر
ر. 21р-7ա

صلوة لاجل القديسة مريم العذرا ... يا سيدتي ربديني لأنني خرجت
ՆՇՈՒՄ՝ կազմաստան Ա.-ին փակցված բույր (մատիտով)՝ «N 1044»,
(սև բանափով, տպագիր)՝ «Նվեր է ստացված Հայաց Բաղադրի բնակիչ
կազմարար Հովհաննես Պատմանյանից Բժ. Առքեւտ ձեպենյանի միջոցով
2-9-64 թ.»:

4

1045

ՍՈՒՐԲ ԾՆՆԴՅԱՆ ԱՂՈԹԱԳԻՐՔ

كتاب رياضة الميلاد المقدس

ՀԱԼԵՊ

1814 թ.

احد الرهبان (زھۇپىچىانىن ۋەنەنەلىد)
(اليسوعية):

ՊԱՐԿՄԱՆԻՉ՝ ԲՈՒՏՐՈՒ [ՊԵՏՐՈՒ] Զھۇپىچىانىن Սաھىر (بطرس جرمانوس)
(صدر):

ԳՐԻՉ և ՍՍԱՑՈՂ՝ ԽՄԱՆՂԵՐ [ԱԼԵԽԱՆԴՐ] Շրիහով (اسكندر شتيدوك):

ԹԵՐԹ՝ 20: ՊՐԱԿ' IV (8), III (14), III (20): ՆՅՈՒԹ՝ արևմտյան բույր.
լուսագծերով, ճնշատողերով, լուսաբրոշմով՝ եռամնաշիկ: ՄԵՆՈՒԹՅՈՒՆ՝
15.4x10.6: ԳՐՈՒԹՅՈՒՆ՝ միայնու (10.5x7): ԳԻՐ՝ քանասի: ԹԱՆԱ.Ք՝ սև, խո-
րագրեր, կարևոր բառեր, գծեր՝ կարմիր: Հիշագիր: ՏՈՂ՝ 13: ԿՈԶՄ՝
դարշնագոյն մոմլաք, միջուկը՝ ստվարաբույր, աստառը՝ դեղնավոն
բույր: ՊԱ.ՊՈ.Ա.Կ' 2 (Ա+Բ), շգրված դեղնավոն գործարանային բույր:

ՎԻՃԱԿ՝ բարձրար, նորոգված, ձեռագիրը պակասավոր է միշից և վերջից:

տմւան

Տարուան աշխարհ աշխարհ
Վանակուան աշխարհ աշխարհ
պահանջակի ան հանակ ան հանակ
Աշխարհ մի բան ան հանակ
Աշխարհ մի բան ան հանակ
Աշխարհ մի բան ան հանակ

Նմուշ 13р

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Բնագիրը բարգմանված է իտալերևից: Նշվում է, որ աղոքներն ընթերց-
վում են սր. Ծննդյան տոնից 9 օր առաջ (تقصمه بستعة أيام):

Ընդգրկում է առաջարան, մտորումներ ապաշխարույթան, համեստ ապ-
րելու, բարեխիղ լինելու, ազատ կամք ունենալու և սր. Ծննդյան զիշերվա
մասին: Մտորումները ներկայացված են բաղվածարար: Բերվում են նաև 6
աղերսներ:

Սկիզբ (2р)

بسم الآب والأبن والروح القدس له واحد امين رياضة جلية وبالاقداد جزيلة
لميلاد سيدنا يسوع المسيح الأقدس

Վերջ (20р)

بذراعي سمعان، وأوحى بك من حنة النبي الاسرائيلية، أرحمنا

Տիտղոսարեր՝ 2ա

كتاب رياضة الميلاد المقدس

Ընդհանուր առաջարան՝ 2р-3ա

Տալիف احـد الرهـبـان يـسـوـعـيـةـ، غـيرـةـ عـلـىـ مـجـدـ الـبـرـيـةـ، وـخـلـاـصـ الـأـنـفـسـ الـمـسـيـحـيـةـ، قدـ
استـخـرـجـهـاـ حـدـيـثـاـ مـنـ الـلـغـةـ الـإـيـطـالـيـانـيـةـ إـلـىـ الـعـرـبـيـةـ، لـهـذـهـ الغـاـيـةـ السـنـيـةـ، لـحـقـرـ عـبـيـدـ اللهـ مـنـ الطـاـيفـةـ
الـمـارـونـيـةـ، بـطـرـسـ جـرـمـانـوـسـ صـادـرـ ... وـكـانـ ذـكـرـ فـيـ مـدـيـنـةـ حـلـبـ الـمـحـمـيـةـ، سـنـةـ الـفـ وـثـمـانـمـائـةـ
وـعـشـرـةـ مـسـيـحـيـةـ

Նախարան՝ 3ա-7ը

مقدمة

Ա. Մտորումներ՝ 8ա-18ա

Ա. Մտորումներ՝ 8ա-8ը (պակասավոր վերջից)

تـامـلـتـ لـكـلـ يـوـمـ مـنـ اـيـامـ هـذـهـ رـياـضـةـ

تـامـلـتـ لـكـلـ يـوـمـ مـنـ اـيـامـ هـذـهـ رـياـضـةـ

բ. Մտորով 9. 9ա-10բ

تامل السادس لليوم الحادى والعشرين من الشهر فى ان الطفل الالهى يعلمنا الفقر الاختيارى
գ. Մտորով կ. 11ա-3ա

تامل السابع لليوم الثانى والعشرين من الشهر فى ان الطفل الالهى يعلمنا الوداعة

դ. Մտորով Ը. 13բ-5ա

تامل الثامن لليوم الثالث والعشرين من الشهر فى ان الطفل الالهى يعلمنا الانفراط والاختيار
ե. Մտորով թ. 15բ-8ա

تامل لليل الميلاد ويومه

Բ. Աղերսներ՝ 18բ-20բ

استغاثات تللى اكراما لطفولية يسوع في الخامس والعشرين من كل شهر ثم وفي رياضة
الميلاد المقدس وفي السبت التي تلية

ԳՐՉՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ

1բ

قد اقتى هذه الرياضة المقدسة الفقير اسكندر شتيدوك كاتبها في 15 كانون الثاني افتتاح
يوم آمالها 1814 سنة

ՆՇՈՒԹՄ՝ 1ա-ին փակցված թուղթ (մատիտով) «No 1045», (և քա-
նակով, տպագիր) «Նվեր է ստացված Հալեպ Քաղաքի բնակիչ կազմարար
Հովհաննես Պատմանից Բժ. Ռոբերտ Ճեպենյանի միջոցով 2-9-64 թ.»:

5

1046

ԳԻՇԵՐՎԱՆ ԱՂՈԹՔՆԵՐ ԵՎ ՓԱՌԱԲԱՆՄԱՆ ԵՐԳԵՐ

السهرانه والمدائح

[ԺԲ-ԺԹ դար]

ԳՐԻԶ Անտոնիոս իրն Շամմաս Ֆարաջալլահ 'Ազար ալ Սիրիանի
(أطونيوس ابن الشamas فرج الله عازار السرياني):

ԱՍԱՑՈՂ՝ (գրի զավակը, առանց անվան հիշատակման):
ԹԵՐԹ՝ 28. շգրված՝ 26բ: ՊՐԱԿ՝ XV-2 (28): ՆՅՈՒԹ՝ արևելյան ճնշագիծ
թուղթ: ՄԵՇՈՒԹՅՈՒՆ՝ 24.5x12: ԳՐՈՒԹՅՈՒՆ՝ միայտև (19x10): ԳԻՐ՝ քանասու:
ԹԱՆԱՔ՝ սև: ՏՈՂ՝ տարբեր (16-28): ԿԱԶՄ՝ շագանակագույն մոմլար, միջուկը
սովորաբույզ. աստաղը՝ թուղթ: ՊԱՀՊԱՆԱԿ՝ 3 (Ա+ԲԳ), շգրված արևելյան
թուղթ ճնշագծերով:

ՎԻՃՈՂ՝ բավարար. նորոգված, պակասավոր վերջից:

— Անա —

اخاف ليل ياتي بعنة سرت المعلم ويطبل نفسي
وانا خارق بان اكرم هايك ليس بيحبه صادق
رسيطة يقمع وتشفع لي ويكون عندي امراي مسوم
لا جملة كلام انا لست بيبي يرغب بذلك مضر عالي
لو حبيبي كهي رحبيي ونفعوا زبدي بمساحتنا
ولا كجهبي من رحابي بشاعتني

Խմուշ 6ա

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Արարեւելի սիրիական բարբառով գրված տաղեր՝ նվիրված Մարիամ
Աստվածածնին, սր. Հոգուն, առայբալեւին, նահատակներին, Քրիստոսի
ծննդյանը և տաճար մուտքին:

Բնագրում տեղ է գտել նաև հայերեն «Ավետիս» շարականի արարեւելի
բարգմանությունը (27ա):

Մկիզ (1բ)

مدحه مباركه بوعون للعدره (كذا) ||| مار يعقوب

Վերջ (28բ)

مجدك في الليل والنهار في كل وقت وفي كل ...

Ա. 1բ-2ա

مدحه مباركه بوعون للعدره ||| مار يعقوب

Բ. 2ա-3ա

نكتب قلالات نقال في يوم عيد انتقال

Գ. 3բ-5ա

مدحه على مريم العدرا الطاهره

Դ. 5ար

مدحه مباركه للعدرا في مقام الرساوي

Ե. 6ա-8ա

ميمر لسيتنا العدرا من تاليف الاب مار باسيليوس اي مفريان شمعون نفعنا الله بصلاته

Զ. 8բ-13ա

نبتدى بعون الله تعالى وحسن توفيقه ونكتب بعض بيوت من سهرانت (كذا) السيدة

ՄՐԻՄ ԱԼԻՅԱ ՍԼԱՄ

مريم عليها السلام

Է. 13բ-4ա

مدحه مباركه للعدرا

١٤

مديحة نقال على الرسل والشهد والأموات

١٥

مديحة مباركة (مدحك حل قدرك على فوق الملائكة...)

١٥-٨

مديحة مباركة الى مار بولص وبطرس

١٨-٩

صلاته نقال بصيام (كذا) الكبير

١٩

مديحة مباركة نقال يوم جمعة الالام في السجدة

١٩-٢٠

مديحة مباركة نقال لحزن مريم العذراء على صليب ابنتها يسوع

٢٠-١

مديحة مباركة نقال يوم جمعة الام سيدنا يسوع المسيح

٢٢

مديحة للعذرى (كذا) مريم

٢٢

مديحة على العذراء والقديسين

٢٣-٣

مديحة الى العذراء

٢٣-٤

مديحة نقال في زياب عيد الجسد المقدس

٢٤

ايضا يقال بعيد الجسد باي لحن ارته

٢٤

ايضا يقال في زياب عيد الجسد

٢٤

مديحة مباركة (يا صاح ايسوع حبيبي وافاء ...)

٢٥

مديحة (يا يسوع حل يا احلي ...)

٢٥

مديحة (يسوع اتنا محبوبى. واقهر لاعانا بوجوهه ...)

٢٥-٦

مديحة مباركة نقال يوم دخول السيد المسيح للهيكل

٢٧

مديحة لميلاد سيدنا المسيح وهي ترتيب اخوتنا الارمن نقال يوم عيد الغطاس

٢٧-٨

صلات القديس فيكتورينوس صلاته معنا تقرأ صباحا

ԳՐՉՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ

13w

كملت سهرانت العدرا عليها اشرف السلام

هذه السهرانه وهذه المدايم خط يد والدي المرحوم شمسن مقدسني انطونيوس ابن شناس فرج الله
عازار السرياني الله يرحمهم ويرحم اموات كلمن ترحم عليهم فمن ذود عشقهم بسيدتنا العذراء
وبمدايحةها سلم نفسه وهو بذلك العشق بالتسل والتوكيل وبمقالات التوبة سلم نفسه جدي شناس فرج الله
وانا العبد الحقير مالك هذا الكتاب المدايم اطلب من رب الرحوم ان يرحمني كما رحم والدي
وسيدني ويعطيني توبه وموته صالحه كما اعطاهم بتصرع من يقرأ هذه (كذا) المجمع

ԽՇԱՒՄ՝ 1ա-ին փակցված թուղթ (կապույտ բանափով և մատիտով՝
«No 1046», (սև բանափով, տպաղիր)՝ «Նվեր է ստացված Հալեպ քաղաքի
բնակիչ կազմարար Հովհաննես Պատմանյանից Բժ. Ռոբերտ Ճեպենյանի
միջոցով 2-9-64 թ.»:

ԳՐՉՈՒԹՅՈՒՆ՝ 1ա՝ արարելեն այբովենի տառեր:

6

1127

ԱՆԲԱ. ԱԼՖՈՆՍՈՍ ՌՈԴՐԻԿՈՍ ՌԱՀԵԲ ԱՅՍՈՒ

الأنبا الفونسيوس ردريكوس الراهب اليسوعي

«ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԿԱՏԱՐԵԼՈՒԹՅՈՒՆ» ԳՐՔԻ ԵՐՐՈՐԴ
ՄԱՍԻ ԶՈՐԾՈՐԴ ՀՅՈՒՎԱԾԲ ԱՆԱՐԱՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ³⁵

المقالة الرابعة في العفة من الجزء الثالث من الكمال المسيحي


[ԺԲ. դար]

يوسف ولد انطون (Անտոն Խաչանբուլյան)
(اسطنبولية):

ԹԵՐԹ. 93: ՊՐԱԿ. 10VIII (80), VIII+1 (89), II (93): ՆՅՈՒԹ. արևմտյան
թուղթ. լուսագծերով և ճնշագծերով, լուսանցակողեր՝ կարմիր կետեր:
ՄԵԾՈՒԹՅՈՒՆ՝ 14x10.3: ԳՐՈՒԹՅՈՒՆ՝ միասյուն (12x6.2): Գիր՝ քանասի:
